

ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N17

«24» մայիսի 2023թ.

ք. Գորիս

ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաթև համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի «18»-ի «Տաթև համայնքի ավագանու անդամ Արթուր Սպարտակի Մաթեվոսյանի՝ ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» թիվ 16-Ա որոշումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Մ Է .

Տաթև համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Հենրիկ Աշոտի Խաչատրյանին :

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սոտեփանյան

Նախագահի տեղակալ՝

Ա. Անդրանիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Բակունեց

Անդամներ՝

Ա. Հայրապետյան

Ն. Գրիգորյան

Կ. Պետրոսյան

Հ. Հարությունյան

